

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

**Ֆինանսական Հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն**

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հաշվեփակված տարվա

ԵՐԵՎԱՆ
Մարտ 2010թ.

Բովանդակություն

	Էջ
Տնօրենների խորհրդի կազմ	3
Անկախ աուդիտորական եզրակացություն	4
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Հաշվապահական հաշվեկշիռ	7
Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Տնօրենների խորհրդի կազմ

Վահրամ Բեգլարյան	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն
Արթուր Պետրոսյան	ԼՂՀ վարչապետի օգնական
Հայկ Ավետիսյան	ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության էներգետիկայի բաժնի պետ

Ընկերության ղեկավար անձնակազմ

Վահրամ Բեգլարյան	Գլխավոր տնօրեն
Ժան Հովհաննիսյան	Ֆին. և էկ. գծ. տնօրեն
Արայիկ Դավթյան	Գլխավոր Հաշվապահ

Անկախ աուդիտորական եզրակացություն № 14

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կից ծանոթագրությունները:

Նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

Ընկերության 31.12.2008թ. դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել “Վ.Ս. Աուդիտ” սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, որի կողմից 07.05.2009թ. տրված եզրակացությունում նշված հաշվետվությունների վերաբերյալ արտահայտվել է դրական կարծիք:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ գերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից գերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և դեկլարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

26 Մարտի 2010թ.

ՍՕՍ-Աուդիտ ՍՊԸ

Մանվել Ղազարյան
Տնօրեն

Գնել Խաչատրյան
Աուդիտոր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
 2009թ. դեկտեմբերի 31-ին
 ավարտվող տարվա համար
 հազար դրամ

	Ծան.	2009թ.	2008թ.
Հասույթ	5	1,073,016	386,409
Վաճառքի ինքնարժեք	6	(236,212)	(244,722)
Համախառն շահույթ		836,804	141,687
Վարչական ծախսեր	7	(69,862)	(65,951)
Իրացման ծախսեր		(335)	-
Այլ գործառնական եկամուտներ		647	-
Այլ գործառնական ծախսեր	8	(27,518)	(11)
Այլ ոչ գործառնական օգուտ/(վնաս)	9	(61,555)	(2,325)
Շահույթ մինչև հարկումը		678,181	73,400
Շահութահարկի գծով ծախս	11	(38,327)	(3,670)
Տարվա զուտ շահույթ		639,854	69,730

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2010թ. մարտի 26-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Վահրամ Բեգլարյան
 Գլխավոր տնօրեն

Արայիկ Դավթյան
 Գլխավոր հաշվապահ

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՈՒՈՒ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հազար դրամ

	<u>Ծան.</u>	<u>31.12.2009թ.</u>	<u>31.12.2008թ.</u>
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	5,029,851	5,367,577
Ոչ նյութական ակտիվներ	13	6,464	19,974
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	14	2,829,261	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	15	449,748	448,006
		8,315,324	5,835,557
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	16	19,128	6,023
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	503,246	212,779
Տրված կանխավճարներ		3,971	12,028
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	56,327	7,922
Այլ ընթացիկ ակտիվներ		931	4,398
		583,603	243,150
		8,898,927	6,078,707
Ընդամենը ակտիվներ			
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	19	5,962,074	5,100,000
Էմիսիոն եկամուտ	19	43,104	-
ՀՄ վերագնահատումից արժեքի աճ		-	13,087
Կուտակված շահույթ		656,170	72,960
		6,661,348	5,186,047
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	20	1,482,793	-
		1,482,793	-
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	20	709,415	879,679*
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	9,797	9,075*
Շահութահարկի գծով պարտավորություն	11	35,575	3,906
		754,787	892,660
		8,898,927	6,078,707
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ			

* Համեմատական տեղեկատվությունը վերաներկայացված է (Ծան. 4):

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արցախի ՀԷԿ» ԲԲԸ

2009թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա համար

հազար դրամ

	<u>2009թ.</u>	<u>2008թ.</u>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	1,108,143	276,494
Գործառնական այլ գործունեությունից ստացված դրամական միջոցներ	219,936	248,663
Նյութերի, ապրանքների ձեռք բերման դիմաց վճարումներ	(184,881)	(335,854)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(95,840)	(80,153)
Վճարումներ բյուջե	(33,014)	(33,822)
Վճարումներ սոցիալական ապահովության գծով	(15,955)	(13,672)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	<u>(4,720)</u>	<u>(3,171)</u>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>993,669</u>	<u>58,485</u>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից	-	10,200
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման գծով	<u>(2,562,336)</u>	<u>(673,093)</u>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>(2,562,336)</u>	<u>(662,893)</u>
Փոխարժեքային տարբերություններ	<u>(4,708)</u>	<u>(1,241)</u>
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից	887,074	-
Ստացված վարկերից և փոխառություններից	2,540,673	638,229
Ստացված վարկերի և փոխառությունների մարում	(1,736,237)	(30,480)
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	(69,730)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>1,621,780</u>	<u>607,749</u>
Դրամական միջոցների զուտ հոսքեր	48,405	2,100
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	7,922	5,822
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	56,327	7,922

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

2009թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

	Կանոնա դրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահ ատումից արժեքի աճ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 1 հունվարի 2008թ.	36,083	-	-	3,230	39,313
Հիմնական միջոցների վերագնահատումից աճ	-	-	5,077,004	-	5,077,004
Կանոնադրական կապիտալի համալրում	5,063,917	-	(5,063,917)	-	-
Տարվա շահույթ	-	-	-	69,730	69,730
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2008թ.	5,100,000	-	13,087	72,960	5,186,047
Բաժնետոմսերի թողարկում	862,074	43,104	-	-	905,178
Շահարաժիններ	-	-	-	(69,730)	(69,730)
Տարվա շահույթ	-	-	-	639,853	639,853
Ներքին շարժեր	-	-	(13,087)	13,087	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2009թ.	5,962,074	43,104	-	656,170	6,661,348

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ
2009թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է ԼՂՀ կառավարության 360 որոշմամբ՝ «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ վերակազմակերպման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը: Ընկերության կանոնադրությունը հաստատված է ԼՂՀ արդարադատության նախարարության պետքեզիստրի Ստեփանակերտի տարածքային բաժնի կողմից 2007թ. հոկտեմբերի 2-ին, գրանցման թիվ 44313011407, վակայական 02Ա 002083:

Ընկերության հիմնական բաժնետերերն է հանդիսանում ԼՂՀ կառավարությունը՝ 86%:

Ընկերության գործունեության ոլորտն է էլեկտրաէներգիայի արտադրությունը և իրացումը:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ԼՂՀ ք. Ստեփանակերտ, Ա Առաքելյան 10:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են ԼՂՀ օրենսդրությանը համապատասխան վարվող հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների (այսուհետ՝ ՀՀՀՀՄ) պահանջներին համապատասխան:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Հաշվետվական արժույթը

Ընկերության հաշվետվական արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամներով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Դատողությունների, գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելիս Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը (մասնավորապես՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների, նրանց ծառայության ժամկետների և այլնի), ինչպես նաև պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ‘Դրամի’ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված հաշվարկային փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով,

գ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են իրական արժեքով, ներկայացվում են (վերահաշվարկվում են) իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատման արդյունքում, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են: Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով սահմանված և իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածների՝ իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով վերագնահատման արդյունքում, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.2 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- դեբիտորական պարտքեր,
- կրեդիտորական պարտքեր,
- ստացված վարկեր և փոխառություններ,
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները չեն դասակարգվում որպես իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ, որոնց փոփոխությունը արտացոլվում է ժամանակաշրջանի շահույթում և վնասում:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները կազմված են դրամարկի դրամական միջոցներից և ցպահանջ ավանդներից: Բանկային ցպահանջ օվերդրաֆտները, որոնք կազմում են Ընկերության դրամական միջոցների կառավարման համակարգի անբաժանելի մասը, ներառված են որպես դրամական միջոցների և դրանց համարժեքների բաղկացուցիչ՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլելու նպատակով:

3.2.1 Ծանաչումը և սկզբնական չափումը

Ֆինանսական գործիքները ճանաչվում են հաշվեկշռում (հաշվառման մեջ) այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքները չափվում են փոխհատուցման իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Կարճաժամկետ (մինչև վեց ամիս մարման ժամկետ ունեցող) դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հավասար է համապատասխան գործարքի գնին, այսինքն՝ դեբիտորական (կրեդիտորական) պարտքի դիմաց ստացման (վճարման) ենթակա դրամական միջոցների անվանական գումարին, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

3.2.2 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը դա այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվել էր սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով և հանած արժեզրկման գծով դուրսգրված ցանկացած գումար: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկման և կիրառվող ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում տոկոսային եկամուտների և ծախսերի բաշխման մեթոդ է: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որով մինչև մարման ժամկետը կամ շուկայի վրա հիմնված հաջորդ վերանայումը դրամական միջոցների ակնկալվող վճարումների հոսքերը զեղչվում են ճշգրտորեն մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ընթացիկ գուտ հաշվեկշռային արժեքը: Այս հաշվարկում պետք է ներառվեն պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները:

3.2.3 Ֆինանսական գործիքների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվը (դեբիտորական պարտքերը) ապաճանաչվում է (դուրս է գրվում հաշվեկշռից) այն և միայն այն դեպքում, երբ.

ա) լրանում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ պահանջելու ժամկետը կամ

բ) Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ ստանալու պայմանագրային իրավունքը՝ առանց պահպանելու ակտիվի նկատմամբ վերահսկողությունը կամ ակտիվի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական պարտավորությունը (կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները) դուրս է գրվում հաշվեկշռից այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության ժամկետը):

3.3 Բաժնետիրական կապիտալ

3.3.1 Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

3.3.2 Բաժնետիրական կապիտալի հետզնում

Երբ որպես սեփական կապիտալ ճանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարված գումարի չափը, ներառյալ ուղղակիորեն գործարքին վերագրվող ծախսերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցումներ: Հետ գնված բաժնետոմսերը դասակարգվում են որպես հետզնված սեփական փայամասնակցության գործիքներ և ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցումներ:

3.3.3 Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որի ընթացքում հայտարարվում են:

3.4 Հիմնական միջոցներ

3.4.1 Ծանաչումը և սկզբնական չափումը

Հիմնական միջոցների միավորը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

- ա) ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և
- բ) դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը՝ հանած առևտրային զեղչերը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Մեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի ծախսումները, ինչպես նաև արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը: Ներքին շահույթները և նյութերի, աշխատուժի և այլ ծախսումների նորմալ մակարդակից բարձր ծախսումները կառուցվող ակտիվի սկզբնական արժեքի մեջ չեն ներառվում: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը, հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են ինքնարժեքով:

Այն դեպքերում, երբ հիմնական միջոցների տվյալ միավորը կազմող բաղկացուցիչները բավականաչափ էական են, ունեն տարբեր օգտակար ծառայության ժամկետներ կամ Ընկերությանը օգուտ են բերում տարբեր կերպ, նրանք ճանաչվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Ֆինանսական վարձակալությունը ճանաչվում է որպես ակտիվ և պարտավորություն այն գումարով, որը վարձակալության սկզբում հավասար է վարձակալված գույքի իրական արժեքին կամ վարձակալական նվազագույն վճարների ներկա զեղչված արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է:

3.4.2 Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորի վրա կատարված հետագա ծախսումները ավելացվում են հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Մյուս բոլոր դեպքերում ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

3.4.3 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

«Արցախ ՀԷԿ» Փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման ժամանակ «Արցախ ՀԷԿ» Բաց բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտով հանձնված

արժեքները վերջինիս մոտ հիմք են հանդիսացել հիմնական միջոցների սկզբնական արժեքների որոշման համար:

3.4.4 Մաշվածություն

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

- Շենքեր 40 տարի
- Կառուցվածքներ 55 տարի
- Փոխանցող հարմարանքներ 25 տարի
- Արտադրատնտեսական գույք 7 տարի
- Մեքենաներ, սարքավորումներ 20 տարի
- Տրանսպորտային միջոցներ 11 տարի
- Այլ հիմնական միջոցներ 1-5 տարի

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները պարբերաբար վերանայվում են, և եթե ակնկալվող գնահատականները զգալի չափով տարբերվում են նախորդ գնահատականներից, ընթացիկ և հետագա հաշվետու ժամանակաշրջանների մաշվածության հաշվեգրումները ճշտվում են:

3.5 Ոչ նյութական ակտիվներ

3.5.1 Ոչ նյութական ակտիվների սահմանումը և ճանաչումը

Ոչ նյութական ակտիվը որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ է, որը գուրկ է ֆիզիկական սուբստանցիայից:

Ակտիվը, ոչ նյութական ակտիվների սահմանման համատեքստում, բավարարում է որոշելիության (իդենտիֆիկացման) չափանիշին, երբ այն.

- ա) կարող է բաժանվել Ընկերությունից՝ հետագա վաճառքի, փոխանցման, վարձակալության տալու կամ փոխանակելու համար, ինչպես անհատական ձևով, այնպես էլ համապատասխան պայմանագրի, ակտիվի կամ պարտավորության հետ միասին, կամ
- բ) առաջանում է պայմանագրային կամ այլ իրավական իրավունքներից, անկախ այն հանգամանքից՝ հանդիսանում են այդ իրավունքները փոխանցվող կամ առանձնացվելի Ընկերությունից կամ այլ իրավունքներից և պարտավորություններից, թե ոչ:

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ՝

- ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և
- բ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

3.5.2 Հետազոտություն և մշակում

Հետազոտություն ծախսումները, որոնք կատարվում են նոր գիտական կամ տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռք բերելու ակնկալիքով, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ դրանց առաջացման ժամանակաշրջանում:

Մշակման ծախսումները՝ այնքանով, որքանով հետազոտության արդյունքները կիրառվում են նոր կամ էականորեն բարելավված արտադրատեսակների և գործընթացների արտադրությունը (իրականացումը) պլանավորելու և նախագծելու համար, կապիտալացվում են, եթե այդ արտադրատեսակը կամ գործընթացը տեխնիկական և առևտրային տեսանկյունից իրագործելի են, և Ընկերությունն ունի բավարար ռեսուրսներ մշակումն ավարտելու համար: Կապիտալացված ծախսումները ներառում են նյութերի արժեքը, աշխատուժի ծախսումները և արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը: Մշակման այլ ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս կատարվելու ժամանակաշրջանում: Մշակման կապիտալացված ծախսումները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

3.5.3 Այլ ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված այլ ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ներստեղծված գուղվիլի և մակնիշների, կադրերի վերապատրաստման, գովազդի և առաջխաղացման գծով ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս կատարվելու ժամանակաշրջանում:

3.5.4 Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները, որոնք կատարվել են ոչ նյութական ակտիվի ֆունկցիաները ընդլայնելու, բաղկացուցիչը փոխարինելու կամ սպասարկելու համար, ավելացվում են ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքին, եթե Ընկերությունը կարող է ցուցադրել, որ այդ ծախսումները հնարավորություն կտան ակտիվին առաջացնել ապագա տնտեսական օգուտներ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից և այդ ծախսումները կարող են արժանահավատորեն չափվել:

3.5.5 Ամորտիզացիա

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Ընկերության բոլոր ոչ նյութական ակտիվներն ունեն սահմանափակ օգտակար ծառայության ժամկետներ և ամորտիզացվում են գնահատված օգտակար ծառայության ընթացքում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	30 տարի
Արտոնագրեր, լիցենզիաներ	40 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	10 տարի

3.6 Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ընկերությունը չունի ֆինանսական վարձակալությամբ ստացված ակտիվներ:

Ֆինասական վարձակալությունից տարբերվող վարձակալությունը համարվում է գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալությամբ ստացված ակտիվները չեն ճանաչվում Ընկերության հաշվապահական հաշվեկշռում:

3.7 Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման գուտ արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է միջին կշռված արժեքի բանաձևով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Պաշարների հնարավոր իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

3.8 Արժեզրկում

Ընկերության ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվների փոխհատուցվող գումարները:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Վերագնահատված հիմնական միջոցների արժեզրկումից բոլոր կորուստները ճանաչվում են նույն կերպ, ինչ վերագնահատումները:

Արժեզրկումից մյուս կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես տվյալ ժամանակաշրջանի ծախս:

3.8.1 Փոխհատուցվող գումարի հաշվարկ

Ընկերության մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների և դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է ակնկալվող դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքով՝ զեղչված ակտիվին բնորոշ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերը չեն զեղչվում:

Մյուս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է այդ ակտիվը:

3.8.2 Արժեզրկումից կորուստների հակադարձում

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Այլ ակտիվների գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոփոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործված գնահատականները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ համապատասխան մաշվածություն կամ ամորտիզացիա հաշվարկելուց հետո, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները (անհավաքագրելիության պահուստը): Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստ ստեղծվում է, երբ առկա է օբյեկտիվ վկայություն, որ ընկերությունը ի վիճակի չի լինի ժամանակին հավաքագրել բոլոր գումարները՝ դեբիտորական պարտքերի առաջացման սկզբնական պայմաններին համապատասխան:

Որպես դեբիտորական պարտքի արժեզրկման հնարավոր հայտանիշներ են ընդունվում դեբիտորի նշանակալի ֆինանսական դժվարությունները, նրա սնանկացման մեծ հավանականությունը, վճարումների էական ուշացումները: Պահուստի մեծությունը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրա գծով ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերի ներկա արժեքի տարբերություն: Անհավաքագրելի դեբիտորական պարտքը դուրս է գրվում պահուստի հաշվին:

Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստի ստեղծումը, փոփոխությունները, ինչպես նաև դուրս գրված գումարների հետագա վճարումները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.10 Աշխատակիցների հատուցումներ

3.10.1 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

- ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.10.2 Սահմանված մասհանումների պլաններ

Ընկերության սահմանված հատուցումների պլանը՝ Սոցիալական ապահովագրություն պետական հիմնադրամը, պետական պլան է: Այն հիմնադրվել է օրենսդրությամբ և կառավարվում է պետության կողմից: Ընկերությունը որևէ ազդեցություն չունի պետական հիմնադրամի վրա:

Երբ աշխատակիցը ժամանակաշրջանի ընթացքում ծառայություն է մատուցում Ընկերությանը, վերջինս այդ ծառայության դիմաց սահմանված մասհանումների պլանին վճարվելիք մասհանումը ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված մասհանումները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.11 Պահուստներ

Հաշվապահական հաշվեկշռում պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք:

Պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Պահուստի լավագույն գնահատականը որոշելիս հաշվի են առնվում այն ռիսկերը և անորոշությունները, որոնք անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ դեպքերում և պարագաներում: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի փոփոխության ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից կներկայացնի այն ծախսումների ներկա (գեղչված) արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Ջեղչման դրույքը այն դրույքն է, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը:

3.12 Հասույթ

3.12.1 Ծառայություններ

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Ընկերությունը գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն.

Էլեկտրաէներգիայի իրացումից հասույթը ճանաչվում է իրացմանը զուգընթաց՝ յուրաքանչյուր ամսվա կտրվածքով: Այլ ծառայությունների ավարտման աստիճանը գնահատվում է հաշվի առնելով կատարված աշխատանքների ուսումնասիրությունը:

3.12.2 Ապրանքներ

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը.

բ) Ընկերությունը չի պահպանում՝

I. կառավարման այն չափով մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից,

II. վաճառված ապրանքների նկատմամբ վերահսկողություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն:

3.12.3 Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալությունից ստացվող հասույթը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է գծային հիմունքով:

3.13 Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկերն առաջանում են այնպիսի գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում է սեփական կապիտալում: Նման դեպքերում հարկերը ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում:

3.13.1 Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

3.13.2 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ:

Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով ճանաչվում է հետաձգված հարկային պարտավորություն՝ բացառությամբ նրանցից, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որն այդ գործարքի պահին չի ազդում ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի (վնասի) վրա:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որն այդ գործարքի պահին չի ազդում ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի (վնասի) վրա:

Հետագա ժամանակաշրջաններ տեղափոխվող չօգտագործված հարկային վնասների գծով ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացումը, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների

վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

3.14 Ֆինանսական ծախսեր և եկամուտեր

Ֆինանսական եկամուտը ներառում է փոխառություններից ստացված տոկոսային եկամուտը և արտարժույթի փոխարժեքային տարբերություններից շահույթները: Տոկոսային եկամուտը ճանաչվում է հաշվեգրման պահին՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Փոխարժեքային տարբերություններից շահույթները ճանաչվում և չափվում են այնպես, ինչպես նկարագրված է «Գործարքներ արտարժույթով» բաժնում:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները, պահուստի հաշվեկշռային արժեքի աճը (արտացոլելու համար ժամանակի անցնելու փաստը), փոխարժեքային տարբերություններից վնասները, ինչպես նաև ֆինանսական ակտիվների գծով ճանաչվող արժեզրկումից կորուստները: Փոխառության գծով տոկոսները և պահուստի հաշվեկշռային արժեքի աճը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք հաշվեգրվում (կատարվում) են: Փոխարժեքային տարբերություններից վնասը ճանաչվում և չափվում է այնպես, ինչպես նկարագրված է «Գործարքներ արտարժույթով» բաժնում: Ֆինանսական ակտիվների գծով ճանաչվող արժեզրկումից կորուստները ճանաչվում և չափվում են այնպես, ինչպես նկարագրված է «Արժեզրկում» բաժնում:

3.15 Այլ ծախսեր

3.15.1 Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսիչ գումարները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես վարձակալության գծով կատարած ընդհանուր վճարների բաղկացուցիչ մաս:

3.16 Էական սխալների ուղղում և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն

Ընկերությունում կիրառվում են էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության թույլատրելի այլընտրանքային մոտեցումները: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, եթե նախորդ ժամանակաշրջանին վերաբերող ցանկացած ճշգրտումից առաջացող գումար խելամտորեն որոշելի է: Յուրաքանչյուր առաջացող ճշգրտում ներառվում է ընթացիկ ժամանակաշրջանի գուտ շահույթը կամ վնասը որոշելիս:

4. Համեմատական տեղեկատվության վերաներկայացում

Ներկայացվող հաշվետվություններում վերաներկայացվել են ստացված կարճաժամկետ փոխառությունների գծով պարտավորությունները, որոնք նախորդ տարիների ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են որպես ստացված ընթացիկ կանխավճարներ:

Հազար դրամ

	31.12.2008թ ներկայացված	Վերադասա կարգում	31.12.2008թ վերաներկայաց ված
Առևտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր	(249,483)	240,500	(8,983)
Վարկեր և փոխառություններ - ընթացիկ	(639,179)	(240,500)	(879,679)

5. Հասույթ

Հազար դրամ

	2009թ.	2008թ.
Արտադրված էլեկտրաէներգիայի վաճառքից	1,073,016	386,409
	1,073,016	386,409

6. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ

	2009թ.	2008թ.
Հիմնական միջոցների մաշվածություն	93,890	62,102
Արտադրական օբյեկտների պահպանման ծախսեր	34,069	33,240
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	68,505	50,268
Սոցիալական ապահովության գծով ծախսեր	10,276	6,711
Վերանորոգման ծախսեր	3,908	49,437
Նյութեր	11,091	15,358
Այլ ծախսեր	14,473	27,606
	236,212	244,722

7. Վարչական ծախսեր

	Հազար դրամ	
	2009թ.	2008թ.
Աշխատանքի վարձատրության գծով	33,568	28,371
Սոցիալական ապահովության գծով	5,122	4,314
Հիմնական միջոցների մաշվածություն	3,708	6,660
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	8,457	5,084
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	3,480	5,412
Հիմնական միջոցների շահագործման և պահպանման ծախսեր	2,750	-
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	2,458	1,598
Կոմունալ և գրասենյակային ծախսեր	4,665	7,490
Բանկային ծախսեր	2,468	567
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	1,365	-
Այլ ծախսեր	1,821	6,455
	69,862	65,951

8. Այլ գործառնական ծախսեր

	Հազար դրամ	
	2009թ.	2008թ.
Բաժնետոմսերի տեղաբաշխման միջնորդավճար	21,316	-
Տույժեր, տուգանքներ	2,977	-
Հետազոտության և մշակման ծախսեր	1,693	-
Այլ ծախսեր	1,532	11
	27,518	11

9. Այլ ոչ գործառնական օգուտ/(վնաս)

	Հազար դրամ	
	2009թ.	2008թ.
Փոխարժեքային տարբերություններից եկամուտներ	73,139	133
Փոխարժեքային տարբերություններից ծախսեր	(131,247)	(2,192)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս) (զուտ)	(58,108)	(2,325)
Այլ ոչ գործառնական օգուտներ	56	-
Այլ ոչ գործառնական վնասներ	(3,503)	-
	(61,555)	(2,325)

10. Անճնակազմի գծով ծախսեր**Հազար դրամ**

	<u>2009թ.</u>	<u>2008թ.</u>
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	102,073	78,639
Մոցիալական ապահովության վճարներ	15,398	11,025
	<u>117,471</u>	<u>89,664</u>

2009թ. Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 77 մարդ (2008թ.՝ 77 մարդ):

11. Շահութահարկի գծով ծախս

Ընկերության գործունեության արդյունքում առաջացած հարկվող շահույթի նկատմամբ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված է 5 տոկոս շահութահարկի դրույքաչափ (2008թ. – 5%):

Հազար դրամ

	<u>2009թ.</u>	<u>2008թ.</u>
Շահութահարկի գծով ծախս	38,328	3,670
	<u>38,328</u>	<u>3,670</u>

Արդյունավետ հարկային դրույքի համադրում**Հազար դրամ**

	<u>2009թ.</u>	<u>%</u>	<u>2008թ.</u>	<u>%</u>
Շահույթ մինչև հարկումը	678,181	-	73,400	-
Շահութահարկի հաշվարկ սահմանված (կիրառվող) հարկային դրույքով	33,909	5	3,670	5
Չհարկվող եկամուտների հարկային հետևանքը	(3,657)	(0.5)	-	-
Չնվազեցվող ծախսերի հարկային հետևանքը	8,076	1.2	-	-
Շահութահարկի գծով ծախսը և հարկի արդյունավետ դրույքը	<u>38,328</u>	<u>5.7</u>	<u>3,670</u>	<u>5</u>

12. Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Հոդ	շեքեր	կառուցվածքներ	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ, սարքավորումներ,	Տրանսպորտային միջոցներ	արտադրատնտեսական գույք	Բազմաթիվ տնկարկներ	Շահագործման մեջ չգտնվող	Այլ	Ընդամենը
Մկրբնական արժեք											
Առ 1 հունվարի 2008թ.	-	21,780	-	16,823	14,135	4,812	23,008	-	278,783	-	359,341
Ավելացումներ	-	4,560	-	20,071	4,318	7,421	7,213	2,874	-	270	46,727
Նվազեցումներ	-	-	-	-	-	-	(1,542)	-	(341)	-	(4,683)
Վերագնահատում	-	4,497,975	-	147,078	2,247,135	-	345,907	-	-	-	7,238,095
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	-	4,524,315	-	183,972	2,265,588	12,233	374,586	2,874	275,642	270	7,639,480
Ավելացումներ	2,800	1,058	-	-	3,201	96	780	-	441,461	70	449,466
Նվազեցումներ *	-	-	-	-	-	-	-	-	(689,594)	-	(689,594)
Վերադասակարգումներ	-	(1,183,813)	4,708	(181,219)	1,740,938	12,458	(365,563)	-	(27,509)	-	-
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	2,800	3,341,560	4,708	2,753	4,009,727	24,787	9,803	2,874	-	340	7,399,352
Մաշվածություն											
Առ 1 հունվարի 2008թ.	-	17,408	-	8,510	9,069	-	10,797	-	-	-	45,784
Մաշվածության գումար	-	35,437	-	1,730	19,388	1,924	6,162	384	-	5	65,030
Վերագնահատում	-	1,342,615	-	41,225	673,830	-	103,421	-	-	-	2,161,091
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	-	1,395,460	-	51,465	702,287	1,924	120,380	384	-	5	2,271,905
Մաշվածության գումար	-	41,352	124	105	50,536	3,330	1,521	575	-	53	97,596
Վերադասակարգումներ	-	(371,514)	1,165	(49,134)	530,740	5,984	(117,241)	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	-	1,065,298	1,289	2,436	1,283,563	11,238	4,660	959	-	58	2,369,501
Չուտ հաշվեկշռային արժեք											
Առ 1 հունվարի 2008թ.	-	4,372	-	8,313	5,066	4,812	12,211	-	278,783	-	313,557
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	-	3,128,855	-	132,507	1,563,301	10,309	254,206	2,490	275,642	265	5,367,575
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	2,800	2,276,262	3,419	317	2,726,164	13,549	5,143	1,915	-	282	5,029,851

* Շահագործման չհանձնված Հիմնական միջոցները 2009թ. վերադասակարգվել են որպես կառուցվող հիմնական միջոցներ՝ 667,1445 հազար դրամ, որպես տեղակայման ենթակա սարքավորումներ՝ 22,449 հազար դրամ:

13. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

	Արտոնագրեր, լիցենզիաներ	Հաշվապահական համակարգ չային ծրագիր	Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
Առ 1 հունվարի 2008թ.	-	-	-	-
Չեռքբերումներ	2,000	255	18,142	20,397
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	2,000	255	18,142	20,397
Չեռքբերումներ	2000	-	1,452	3,452
Նվազեցումներ *	-	-	(16,750)	(16,750)
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	4,000	255	2,844	7,099
<i>Կուտակված ամորտիզացիա</i>				
Առ 01 հունվարի 2008թ.	-	-	-	-
Տարվա ամորտիզացիա	100	9	314	423
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	100	9	314	423
Տարվա ամորտիզացիա	218	26	387	631
Նվազեցումներ	-	-	(419)	(419)
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	318	35	282	635
<i>Չուտ հաշվեկշռային արժեք</i>				
Առ 1 հունվարի 2008թ.	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	1,900	246	17,828	19,974
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	3,682	220	2,562	6,464

* Այլ ոչ նյութական ակտիվներում հաշվառվող կառուցվող ՀԷԿ-երի նախագծային արժեքները վերադասակարգվել են և վերագրվել համապատասխան ՀԷԿ-երի արժեքներին:

14. Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ

ազար դրամ

	<u>31.12.2009թ.</u>	<u>31.12.2008թ.</u>
Կառուցվող հիմնական միջոցներ	1,910,644	-
Տեղակայման ենթակա հիմնական միջոցներ	918,617	-
	<u>2,829,261</u>	<u>-</u>

15. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

	Հազար դրամ	
	31.12.2009թ.	31.12.2008թ.
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար	449,748	448,006
	<u>449,748</u>	<u>448,006</u>

16. Պաշարներ

	Հազար դրամ	
	31.12.2009թ.	31.12.2008թ.
Նյութեր	17,435	5,640
Արագամաշ առարկաներ	1,692	383
	<u>19,127</u>	<u>6,023</u>

17. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	Հազար դրամ	
	31.12.2009թ.	31.12.2008թ.
<i>Առևտրային դեբիտորական պարտքեր</i>		
Դեբիտորական պարտքեր արտադրված էլեկտրաէներգիայի ծով	369,091	188,084
<i>Այլ դեբիտորական պարտքեր</i>		
Դեբիտորական պարտքեր ԱԱՀ-ի գծով	133,982	23,835
Այլ	173	860
	<u>134,155</u>	<u>24,695</u>
	<u>503,246</u>	<u>212,779</u>

18. Գրանական միջոցներ և դրանց համարժեքներ

	Հազար դրամ	
	31.12.2009թ.	31.12.2008թ.
Կանխիկ դրամ դրամարկղում	448	249
Բանկային հաշիվների մնացորդներ	55,879	7,673
	<u>56,327</u>	<u>7,922</u>

19. Կանոնադրական կապիտալ

	<u>31.12.2009թ.</u>	<u>31.12.2008թ.</u>
Բաժնետոմսերի քանակ (հատ)	5,962,074	5,100,000
Անվանական արժեք (դրամ)	<u>1,000</u>	<u>1,000</u>
Գումար (հազար դրամ)	<u>5,962,074</u>	<u>5,100,000</u>

Բաժնետոմսերը բաշխված են հետևյալ բաժնետերերի միջև.

	<u>31.12.2009թ.</u>		<u>31.12.2008թ.</u>	
	հատ	%	հատ	%
ԼՂՀ Կառավարություն	5,100,000	85.5	5,100,000	100.0
“Արմավիսթանկ” ՓԲԸ	366,265	6.1	-	-
Սոֆի Սարգսյան	100,000	1.7	-	-
“Արցախի ազատամարտիկների միություն” ՀԿ	100,000	1.7	-	-
Այլ (1%-ից ցածր)	295,809	5.0	-	-
Ընդամենը	5,962,074	100.0	5,100,000	100.0

2009թ. ընթացքում ընկերությունը հայտարարել և տեղաբաշխել է հասարակ անվանական բաժնետոմսեր: Հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 9,137,926 հատ հասարակ անվանական բաժնետոմս: «Արմենբրոկ» ԲԲԸ-ի միջոցով տեղաբաշխվել է 5,962,074 բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմել է 1,000 դրամ, տեղաբաշխման գինը՝ 1,050 դրամ: 31.12.2009թ. դրությամբ ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի թիվը կազմում է 1,112 անձ:

2009թ. բաժնետոմսերի տեղաբաշխումից ստացված էմիսիոն եկամուտը կազմել է 43,104 հազար դրամ:

20. Վարկեր

	Հազար դրամ	
	<u>31.12.2009թ.</u>	<u>31.12.2008թ.</u>
<i>Երկարաժամկետ վարկեր</i>		
Բանկերից	1,312,793	-
Այլ կազմակերպություններից	<u>170,000</u>	<u>-</u>
	<u>1,482,793</u>	<u>-</u>
<i>Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ</i>		
Բանկերից	368,443	509,179
Այլ կազմակերպություններից	134,472	130,000
ԼՂՀ կառավարությունից	<u>206,500</u>	<u>240,500</u>
	<u>709,415</u>	<u>879,679</u>

Վարկային միջոցների շարժը

Վարկատուներ	2009թ.				2008թ.			
	Մնացորդ	ստացում	մարում	մնացորդ	Մնացորդ	ստացում	մարում	մնացորդ
Բանկեր	509,179	2,061,679	(889,622)	1,681,236	-	509,179	-	509,179
Այլ կազմակերպություններ	130,000	434,472	(260,000)	304,472	-	130,000	-	130,000
ԼՂՀ կառավարություն	240,500	369,000	(403,000)	206,500	-	240,500	-	240,500
Տոկոսային ծախսեր	-	183,616	(183,616)	-	-	30,480	(30,480)	-
Ընդամենը	879,679	3,048,767	(1,736,238)	2,192,208	-	910,159	(30,480)	879,679

21. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	Հազար դրամ	
	31.12.2009թ.	31.12.2008թ.
<i>Առևտրային կրեդիտորական պարտքեր</i>		
Գնումների գծով	6,663	6,812
	6,663	6,812
<i>Այլ կրեդիտորական պարտքեր</i>		
Աշխատավարձի գծով	67	-
Բյուջեի գծով	2,963	2,172
Այլ պարտքեր	134	92
	3,164	2,264
	9,797	9,076

22. Ֆինանսական գործիքներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը հակված է տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետ կապված ռիսկերին:

22.1 Պարտքային ռիսկ

Ընկերությունը չունի նշանակալի պարտքային ռիսկերի կենտրոնացում: Ընկերությունն ունի համապատասխան քաղաքականություն՝ իր ծառայությունները պատշաճ վարկային պատմություն ունեցող կազմակերպությունների մատուցելու համար:

22.2 Տոկոսադրույքի ռիսկ

Ընկերությունը ունի ստացված վարկեր՝ ֆիքսված տոկոսադրույքով: Նշված վարկերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ներկայացված է 20-րդ ծանոթագրությունում: Ընկերությունն այդ վարկերի գծով ենթարկվում է տոկոսադրույքի գնային (իրական արժեքի) ռիսկի: Ղեկավարությունը չունի ֆիքսված կամ տատանվող դրույքաչափերի հանդեպ Ընկերության հակվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկեր և փոխառություններ ստանալիս մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ տատանվող դրույքաչափի նպատակահարմարությունը որոշելու համար ղեկավարությունը հիմնվում է իր սեփական դատողությունների վրա:

22.3 Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի հանդեպ Ընկերության ռիսկը կապված է ստացված վարկերի հետ, որոնք ենթակա են մարման արտարժույթով: Նշված վարկերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ներկայացված է 20-րդ ծանոթագրությունում: Ղեկավարությունը չի հեջավորում արտարժույթի ռիսկի հանդեպ Ընկերության հակվածությունը: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ղեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված են հետևյալ հաշվարկային փոխարժեքները.

	31.12.2009թ.	31.12.2008թ.
1 ԱՄՆ դոլարը հավասար է	377.89	306.26

23. Պայմանական դեպքեր

23.1 Ապահովագրություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Ընկերության գույքը ապահովագրված չէ: Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով՝ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23.2 Դատական գործեր

2009թ. դեկտեմբերին 31-ի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան: